Նորավան

Բնակչություն՝ 517

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 99 կմ,
Հեռավորությունը Սիսիան քաղաքից՝ 12 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1700 մ,
Կարգավիճակը՝ լեռնային,

Նորավանը նոր բնակավայր է, գտնվում է Սիսիան քաղաքից 7 կմ հարավ- արևելք, Որոտան գետի ձախ կողմում, բարձրադիր, մեղմաթեք սարավանդի վրա, գեղատեսիլ վայրում: Գյուղը հիմնադրվել է 1928թ: Բնակիչները եկել են Սիսիանի տարածաշրջանի բնակավայրերից: Ունի կանոնավոր հատակագիծ, տները շարված են կանոնավոր շարքերով, քարակերտ են, թեք տանիքներով, բակերում ունեն պարտեզներ ու բանջարանոցներ:
1970-ական թվականներին առաջացած խոշոր չափերի սողանցքների պատճառով ՀԽՍԽ կառավարության որոշմամբ սկսվում է հին Նորավանի կառուցապատման աշխատանքները:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:
Գյուղատնտեսությամբ զբաղվում է 137 գյուղացիական տնտեսություն:
Անասնագլխաքանակը 2012թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է.
- խոշոր եղջերավոր անասուններ՝ 362գլուխ,
- մանր եղջերավոր անասուններ՝ 668գլուխ,
- խոզեր՝ 76 գլուխ,
- մեղվաընտանիքներ՝ 261:
Համայնքում 2011թ. կատարվել է հացահատիկային մշակաբույսերի 350 հա աշնանացան:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 4144հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 4038 հա, որից՝
- վարելահող՝ 708 հա, խոտհարք՝ 100 հա, արոտ՝ 2361 հա, այլ հողատեսք՝869 հա
- բնակավայրերի հողեր՝ 61 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 26 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝8 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 3 հա,
- հատուկ նշանակության հողեր՝ 7 հա,
- ջրային հողեր՝ 1 հա